



51. ՌԵՍԻ ԱՂՋԿԱ ՀԵՔԻԱԹ

Ժամանակով գեղիմ՝ ռես խորոտ աղջիկ մե կունենա, հմա՝
խորոտ, օր գեղի ջըհնեներ չըմեն կը ծոին վըր իղոր, հմա աղջի!
մեկում չը հավնի — որին աչքն է ծուռ, կըսե, որին քիթն է չերկեն,
կըսե, որին կառճ է, կըսե, որին լուրզ է, կըսե, ու կը կանի մեկ դեն:
Մամն օր մե կըսե.

— Ա՛ղջի, ծամկտրուկ, մարդ քանի կէրթա՝ չը պղտըկնա, կը
մեծնա, էղեր իս լուռ թուփ, մանցի տուն, հմալ շէղնի, խուրբան, տղի
մե չուղե:

— Չէ՛, մարե,— կըսե աղջիկ,— ես իմ սրտով պտի չուղիմ:

— Էդ խոքեր ջըհնենրուց մեկ մե քու սրտով չէ՞:

— Չէ՛,— կըսե աղջիկ,— իմ սրտով չէ:

— Դե մանցի տուն՝ թթու դնինք:

Վըր էս խոսքին ժամանակ մե գընցնա, Մշու դեղրանուց տղե
մե գիկա էդ գեղ, ռեսին կը դառնա մշակ: Էդ տղեն, բանն ի բարին—
նա՛ շատ խորոտ կէղնի, նա՛ շատ գեշ կէղնի, հմա շատ կոթողքով
ու աչքաբաց կէղնի, աղջիկ աչք կը թալե ըդրան, էդի լե՛ աղջկան,
կէղնին ծամոն՝ կը կպին չիրար:

Աղջկա պապ ու մամ ըսկի շայիշ լըն էնի, օր ըդոք ծուած,
էղած ին Ասլի-Քյարամ, չըմքի յա՛ թավլի քունջ, յա՛ խոտի դեղ-
րանու տակ կը հանպտին չիրար, կը պագվին, կը գրկվին, գիրար
կը լիզին, ու քանի կէրթա՝ կը տաքնան:

— Ա՛ղջի,— կըսե օր մե տղեն,— ես որք ու մշակ մարդ, վա՛
թե քու պապ ու մամ քըզի շիտան ընձի:

— Տան-չիտան՝ սիրեր իմ, պտի առնիմ:
 Կըսին ու ամեկ ջոկ-ջոկ ճամպով կը դառնան տուն:
 Ժամանակ մե գընցնա, ժամանակն ի բարին: աղջիկ կէրկու-
 հոգովնա: Հմալ բան տեսնելուն տղամարդ քոռ է, կնկտիք՝ սատա-
 նա, մամ կը տեսնա, օր աղջիկ օրավուր կը փոխվի, փոր լե քանի-
 կէրթա՝ կը պտրզի:
 — Քա՛, վո՛ւյ, սե կապիմ, ա՛ղջի, շէղնի՞ քըզի բան է պատահի:
 Աղջիկ կը կարմրի, զգլուխ կը կախե, լեզուն կը լալկի: Հմա-
 աստծուն է հայտնի, օր աղջրկներ ուրանց մամուն քեվելի շուտ
 սիրտ կը բանան. կը խոստովանի:
 — Մա՛րե, — կըսե, — ես չընք չուղի, հմա էղավ:
 — Վա՛յ, սե կապիս դու, — կըսե մամ ու զուր շոքեր կը տփե, —
 մկա քու պապուն ի՞նչ պատասխան տանք:
 Ռեսկնիկ կը մուրի մնա: Մարդուն ըսե՛ շէղնի, չըսե՛ շէղնի-
 զէդ խայտառակութեն ի՛մալ ծածկե, օր գեղ-ոնեղովի շիմնան. շարեն-
 իր կտրի, ոեսի քեֆով վախտ խոսք կը բանա:
 — Մա՛րդ, — կըսե, — քըզի բան պտի ըսիմ:
 — էրկուն ըսե:
 — էս գիշեր էրազ իմ տեսի, օր մըզի յանի թե թոռ մե էղեր էր,
 խորոտիկ-խորոտիկ թոռ մե՛ աղջիկ, ես կառնենք իմ ձեռ՝ կը խաղ-
 ցուցենք, դու կառներ քու ձեռ՝ կը խաղցուցեր, հմա՛լ կը խնդանենք
 վըր իդոր, կըսիս աշխարհ տվեր են մըզի:
 — էրազդ ի բարին, ոեսկնիկ, — կըսե մարդ, — աղջիկդի ման-
 ցի տուն, դու մըջ էրզին թո՞ռ կը տեսնաս: է՛, ըսե սանք, զփեսե՛ն
 լե տեսար:
 — Վուլա դփեսեն լե տեսա:
 — է՛, ո՞ն էր:
 — Կըսիս՝ մեր մշակն էր:
 — Ի՞նչ, — տեղեն կը թոնա ոես:
 Խուլասա՛ կնիկ կը խոստովանի:
 — Վուլա՛ ըշտե հմլա-հմլա բա՛ն:
 Ռեսն է՛ կը կատղի, կը քաշե զդանակ, օր էրթա զաղջկա ու
 տզի գլուխ կտրե, կնիկ գընկնա քոտներ, գիլա, աղաչանք-պաղա-
 տանք կէնե, զոեսի բարկութեն քիչ մե գիշու:
 — Կա՛նչե զէդ շունշանորդուն:
 Ռեսկնիկ զտղին կը բերե, կը կանգցու ոեսի դեմ:
 — Շան ծիծ կերած, — կը բոռա ոես, — հա՛մ զիմ հաց կը կըտ-
 րիս, հա՛մ զիմ պատվի հետ կը խաղա՛ս, ի՞մալ իս զքու փոր թա-
 փիմ, հա՛:

Տղեն ուրին չը կորցու, կըսե.

— Ռե'ս, մեռնիմ քու յոտաց, դու յորի'ն արունքի տակ կը մտնաս: Ես կը սիրիմ քու աղջկան, քու աղջիկ կը սիրե ընձի: Հա՛յ աստված, ես լե չը կոնամ հաշիվ տամ՝ ի՛մալ պատահավ էդ բան, մեր աչքեր մթնդեր էր, մեր խելք թուի մեր գլխեն: Հարամ կաթ կերած էղնենք, խաբելու էղնենք՝ կաննենք գլուխսի կէրթենք դեն մի: Մկա դո՛ւ դինաս՝ իդա իմ վիզ, իդա քու դանակ:

Կըսե տղեն, կը շրջվի կէրթա դու:

Կնիկ սիրտ կէնե, գընկնա մեջ, կըսե.

— Մա՛րդ, դու լե դինաս՝ մեր մշակ օսկի տղա է, շարաղա ու աշխատող, աշխար կավրի՞ օր դառնունք մըգի փեսա: Էդի հա՛մ փեսա է, հա՛մ տղա: Ըդոց ճակտի գիրն էդ է, ի՞նչ կոնանք էնի:

— Օղորդ է, հմա էդ բան պսակվելուց քետե պտի էղներ, էլ շընք խայտառակվի մըջ աշխըրին:

— Ես զճար կը գտնամ, դու ընձի էրկու օսկի տո՛ւ, հմա՛լ զէդ գործ սուքիմ, օր ջուր էրթա ուր ճամպով:

Չարեն ի՛նչ: Ռեսն էրկու օսկի կիտա, կնիկ գելնա վռաղ-վռաղ կէրթա մըտ գեղի տերտեր: Ճաշի վախտ կէղնի: Տերտեր հանդե ղըլղրե մսով փլավ դրի քառեջ՝ կուտե, եղ կը ճիրա մուրքեն: Օր զոնսկնկան կը տեսնա՝ թևերով զեղոտ բերան ու մուրուք կը սորբե, քը գոստկա, կը հարցու.

— Յա՛, ոնսկնի՛կ, խեր էղնի, քզի ո՞ր քամին թալեց մեր դեն:

— Տե՛ր հայր, մեռնիմ քու կարգին, — կըսե ոնսկնիկ, — քու յոտաց հողն ինք, մեր մեղք շատ է: Դու յըմնօր կը խոսաս հըտ աստըծուն, հալ ու հեքաթ՝ օղյաթ է էկի մեր գլուխ:

— Ինչ օղյաթ, ոնսկնիկ:

— Քըզնե պահինք, աստծուց ի՛նչ պահինք, ըշտե հմլա-հմլա օղյաթ:

— Յա՛, — կը զարմանա տերտեր, — վոլա, ըդի օրինաց դեմ է:

— Մենք լե գինանք՝ օրինաց դեմ է, հմա օր պատահեր է, զմըզի թալինք գե՛տ:

— Է՛, մկա ի՛նչ գուզիս:

— Գուզինք, օր շուտ մե պսակիս, էզնին հալալ մարդ ու կնիկ, օր չը խայտառակվինք:

— Չէ՛ղնի, օռչնած, չէ՛զնի:

— Քա քորի՛ն չէղնի:

— Օրինաց դեմ է: Ես կոնա՛մ աստծու դրած օրենք քանդի:

— Մեռնիմ աստծուն, դու օր զէդ գործ էնիս, աստված ի՛նչ պտի ըսե:

— Զիսի կը պատժեն՝ կը թալե ի դժոխք:

Ռեսկնիկ, դու ռեսկնիկ, դիխու գրնկնա, օր տերտեր սուտ կըսե, զպորժ օր կը ծանդրցու՝ ուր միտք ծուռ է, հմա ղէրկու օսկին կը դնե տերտորոջ ափ, օր կը դնե՝ տերտեր կը կակղնա:

— Օռչնած,— կըսե տերտեր,— ըսկի քըղի մը շա՛րչրկի: Դու պտի տեր էղնեք, օր չը պատահեր: Ձը դինա՛ս՝ աղջիկ ու տղեն բամբակ ու կրակ ին, օր չիրար կպան՝ կը վառին:

— Սև չիգեր վըր բամբկուն լե, վըր կրակին լե, օր հմլա օղլաթ չիգեր մեր գլուխ:

— Մ՛անիծի, լա՛ն, յըմեն փակ դուռ աստված կը բանա: Բան մե կէնինք: Դու չելի գնա ղհարսնքի թատարուկ տես, քու խաթրուն ու ռեսի խաթրուն՝ ես գըդոց պտի պսակիմ, էնիմ հալալ մարդ ու կնիկ: Դե, շուտ էրե, շուտո՛ւց ձեր տան քուֆթեն ու տղմեն շըմ կերերի:

Ռեսկնկան իմալ օր աշխար տան, կը վազե տուն, ղհարսնքի թատարուկ կը տեսնան, տերտեր ղաղջկան ու տղին կը պսակն, կէղնին հալալ մարդ ու կնիկ: Հարսնքից շատ շընցնա՝ աղջիկ կը պառկի, տղեմ՝ կը բերե, վըր ըդոր գեղացիք շատ կը զարմանան:

— Զա՛նըմ,— կըսին,— աշխրի օրենքն է՝ ին ամիս, ին սհաթ, ին դախա պտի թըմըմի, օր էրեխեն ի լուս գա, մեր ռեսի աղջիկ յորի՛ն վառացավ՝ օր չառեջ գտղեն թալեց ի դուս, էդի աստված խաբո՞ւլ է:

— Օռչնածնե՛ր,— կըսե տերտեր,— խարուլ է, հլա բամ՝ լե չեվելի: Յորի՛ կը զարմանաք: Ձըգի օրինակ. աստված էրկինքն էր, Մայրամ գետինք, Մայրամ էրկուհոգովցավ՝ բերեց գՔրիստոս, վըր ըդոր չը զարմանաք, վըր անմեղներո՞ւն կը զարմանաք:

